ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/209

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.12.2018թ. թիվ 27/26-3/24207-18 գրությամբ «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2018թ. թիվ 18-3/[1277703]-18 գրության հիման վրա, 26.12.2018թ. «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 20.12.2018թ. թիվ 18-3/[1277703]-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպված ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից ՝ «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի մոտ ի հայտ են եկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերը՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի իր ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություններ (մասնակիցը ներկայացրել է 107000.004 ՀՀ դրամի գնային առաջարկ, միևնույն ժամանակ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություններ 31.000 ՀՀ դրամի չափով)։»։

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն հիմնադրամի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել։

3. «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ն 10.01.2019թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպվել է ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին 22.10.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ն և 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից։

Աճուրդի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, որին ի պատասխան տրվել է եզրակացություն, համաձայն որի «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ն հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Այնուհետև, Աճուրդի գնահատող հանձնաժողովը 07.11.2018թ. թիվ 4 արձանագրությամբ որոշել է՝ «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 31.000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հայտնում եմ, որ 31.000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ

առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:

«Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:»:

«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն հիմնադրամի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/209 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 26.12.2018թ. թիվ 27/26-3/24207-18 գրությունը, ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2018թ. թիվ 18-3/[1277703]-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 26.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 և 07.11.2018թ. ժամը 15:50-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի 10.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, 22.10.2018թ. դրությամբ «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 09.11.2018թ. «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ին տրված թիվ 5009 տեղեկանքը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 30.10.2018թ. տրված եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ նաև Աճուրդ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից առաջարկված գնային առաջարկը 2-րդ չափաբաժնի համար կազմել է՝ 107000.004 ՀՀ դրամ:

«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ն ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 1 հավելվածով՝ Աճուրդին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Հանձնաժողովը՝ 26.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության.

- 1-ին կետով որոշել է Աճուրդի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ին:

- 3-րդ կետով որոշել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 30.10.2018թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 31.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը՝ 07.11.2018թ. ժամը 15:50-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության.

-1-ին կետով արձանագրել է, որ համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 30.10.2018թ. տրամադրած եզրակացության «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալները չեն համապատասխանում իրականությանը՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի իր ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություն՝ մասնակիցը ներկայացրել է 107000.004 ՀՀ դրամի գնային առաջարկ, միևնույն ժամանակ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 31.000 ՀՀ դրամ գումարի չափով:

- հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 30.10.2018թ. տրամադրած եզրակացությունը որոշել է «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ն 10.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է, որ առաջացած 31.000 ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց հարկային պարտավորությունն՝ ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 09.11.2018թ. «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ին տրված թիվ 5009 տեղեկանքի, գոյացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով: Ընկերության ներկայացուցիչը հայտնել է նաև, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրվա դրությամբ (22.10.2018թ.) հարկային մարմինների

կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի և Ընկերությունը՝ հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրել է 22.10.2018թ. դրությամբ «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, որի համաձայն՝ Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 09.11.2018թ. «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ին տրված թիվ 5009 տեղեկանքը:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի

գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից.

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի

կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ հրավերի 1-ին մասի՝

- 7.10 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը aniaghababyan17@mail.ru հասցեով գործող էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

- 7.11 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.10 կետի 2-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող

ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.
- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 30.10.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (22.10.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 31.000 ՀՀ դրամ:

- «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց .պարտավորությունն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (22.10.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկատվությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ

վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից, հետևաբար «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.12.2018թ. թիվ 27/26-3/24207-18 գրությամբ «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ